ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 մարտի 2012 թվականի N 10-Ա

ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՀՆ-728 հրամանագրի 1.13-րդ կետի պահանջներով՝ Տավուշի մարզի տարածքում սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման միամսյակի աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու նպատակով,

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Տավուշի մարզում 2012թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը հայտարարել սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:

2. Միամսյակը կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով / հավելված 1/:

3. Հաստատել մարզում սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակի իրականացվելիք աշխատանքների ծրագիրը /հավելված 2/:

4. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝

1/ Սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով տեղերում ստեղծել համապատասխան հանձնաժողովներ, կազմել և մարզպետարան ներկայացնել միամսյակի աշխատանքների ծրագրերը, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը:

2/ 2012թ. ապրիլի 21 -ը Տավուշի մարզում հայտարարել համամարզային շաբաթօրյակ:

5. Հանձնաժողովի նախագահին.

1/ Միամսյակն ավարտելուց հետո պատրաստել տեղեկանք՝ մարզպետի խորհրդակցությունում արդյունքներն ամփոփելու համար:

2/ Ներկայացնել լավագույն համայնք, դպրոց, փողոց, բակ, հանգստի գոտի ճանաչվածների ցանկը խրախուսանքի արժանացնելու համար:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

19 մարտի 2012թ.

ք.Իջևան